



Ֆիլմադարան
filmadaran



AMBASSADE
DE FRANCE
EN ARMÉNIE

*Liberté
Égalité
Fraternité*

ԱՐԴԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿԻՆՈՅԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱԼՈԳ

CATALOGUE OF MODERN FRENCH CINEMA PROGRAM

«Ֆիլմադարան» կինոմշակույթի
զարգացման հասարակական
կազմակերպությունը՝
Հայաստանում Ֆրանսիայի
դեսպանության աջակցությամբ,
կազմակերպում է արդի
ֆրանսիական կինոյի շաբաթ,
որի ցուցադրությունները տեղի
կունենան դեկտեմբերի 11-17-ը՝
ամեն օր ժամը 19:00-ին,
Հ. Մալյանի անվան թատրոնում
(Երևան, Վարդանանց փ. 18):

Filmadaran Film Culture
Development Organization with the
support of the Embassy of France in
Armenia is organizing a week
of modern French cinema, the
screenings of which will take
place on December 11-17
every day at 19:00
at the H. Malyan Theatre
(Yerevan, 18 Vardanants Str.).

Ծրագրում, որը ներառում է թե՛
ավագ սերնդի վարպետների նոր
ֆիլմերը, թե՛ սկսնակ ռեժիսորների
խոստումնալից աշխատանքները,
ընդգրկված են վերջին
տասնամյակի ֆրանսիական
լավագույն ֆիլմերից 7-ը, որոնց
մեծ մասն առաջին անգամ
է թարգմանվում հայերեն և
ցուցադրվում Հայաստանում:

The program, which encompasses
the films of masters from older
generations, as well as promising
works from aspiring directors,
includes 7 of some of the best
French films of the last decade,
the majority of which is being
translated to Armenian and
screened in Armenia for the
first time.

Բոլոր ֆիլմերը ցուցադրվում են
բնօրինակի լեզվով և հայերեն ու
անգլերեն ենթագրերով:


All films are screened their original
languages with Armenian and
English subtitles.

Մուտքն ազատ է
ու անվճար:

The admission to screenings is free
of charge.

Հատուկ շնորհակալություն Հենրիկ Մալյանի անվան թատրոնին և
Հայաստանի կինոգործիչների միությանը:

Special thanks to the Henrik Malyan Theatre and the Union of Film Professionals of Armenia.



Բենուա ժակո

1947 թվականին Փարիզում ծնված Բենուա ժակոն 1970-ականներից ի վեր թե՛ հեռուստատեսության, թե՛ մեծ էկրանի համար հեղինակել է տասնյակ խաղարկային և ոչ խաղարկային կինոնկարներ, որոնք մշտապես ընդգրկվել են Կաննի, Վենետիկի և Բեռլինի կինոփառատոներում: Ի թիվս այլոց՝ նա աշխատել է այնպիսի դերասանների

հետ, ինչպիսիք են Իզաբել Յուպերը, Իզաբել Աջանին, Վիրժինի Լեդուայենը, Ֆաբրիս Լուկինին, Կատրին Դենյովն ու Դանիել Օտեյլը:

3 սիրտ/ 3 cœurs Ֆրանսիա, 2014, 106'

Ռեժիսոր՝ Բենուա ժակո
Դերերում՝ Բենուա Պուլվորդ, Շառլոտ Գեյնսբուր, Կյարա Մաստրոյանի, Կատրին Դենյով
Սցենարիստներ՝ Ժուլյեն Բուավան, Բենուա ժակո
Պրոդյուսերներ՝ Ալիս Ժիրար, Էդուարդ Վեյլ
Օպերատոր՝ Ժուլյեն Հիրշ
Արտադրող ընկերություններ՝ Rectangle Productions, Pandora Film, Scope Pictures, Arte France Cinéma

Հարկային տեսուչը, նրա հարսնացուն ու վերջինիս քույրը միահյուսվում են սիրային եռանկյունու մեջ, որտեղ պատահական թվացող հանգամանքներն ամբողջ ճակատագրեր են կերտում:



Benoît Jacquot

Born in Paris in 1947, Benoît Jacquot has made tens of feature and documentary films since the 1970s for both television and the big screen, which are regularly screened at Cannes, Venice and Berlin. He has worked with, among others, actors like Isabelle Huppert, Isabelle Adjani, Virginie Ledoyen, Fabrice Luchini, Catherine Deneuve and Daniel Auteuil.

3 hearts/ 3 cœurs France, 2014, 106'

Director: Benoît Jacquot
Cast: Benoît Poelvoorde, Charlotte Gainsbourg, Chiara Mastroianni, Catherine Deneuve
Scriptwriters: Julien Boivent, Benoît Jacquot
Producers: Alice Girard, Edouard Weil
Cinematographer: Julien Hirsch
Production Companies: Rectangle Productions, Pandora Film, Scope Pictures, Arte France Cinéma

A tax inspector, his new bride and her sister become entwined in a love triangle, where seemingly chance circumstances can change entire fates.



Սելին Սիամա

1978 թվականին ծնված Սելին Սիամայի դեբյուտային «Ջրաշուշաններ» ֆիլմի պրեմիերան տեղի է ունեցել 2007-ին՝ Կաննում, որտեղ հետագայում՝ 2018-ին, նրա «Աղջկա դիմանկարը կրակի մեջ» կինոնկարն արժանացել է «Լավագույն օպերատորական աշխատանք» պարգևին: 2015-ից ի վեր Սիաման SRF-ի՝ Կինոռեժիսորների ընկերակցության համանախագահն է: Նաև սցենարներ է գրել այլ նշանավոր ֆրանսիացի կինոռեժիսորների՝ Ժակ Օդիարի և Անդրե Տեշինեի համար:

Աղջիկների բանդան/ Bande de filles Ֆրանսիա, 2014, 113'

Ռեժիսոր և սցենարիստ՝ Սելին Սիամա
Դերերում՝ Կարիոյա Տուրե, Ասսա Սիլլա, Լինդսի Կարամո, Մարիտո Տուրե
Պրոդյուսեր՝ Բենեդիկտ Կուվրյու
Օպերատոր՝ Կրիստել Ֆորնյե
Արտադրող ընկերություններ՝ Hold Up Films, Lilies Films, Arte France Cinéma

Աղուտ հեռանկարներով աղջիկը միանում է մի բանդայի՝ ընթացքում վերակերտելով ինքն իրեն ու ձեռք բերելով ինքնավստահություն:



Céline Sciamma

Born in 1978, Sciamma made her feature film debut in 2007 with *Water Lilies*, which premiered at Cannes, where later on her 2018 film *Portrait of a Lady on Fire* won the Best Cinematography award. Since 2015, Sciamma has served as the co-president of the SRF (Society of Film Directors). She has also written scripts for other notable French filmmakers such as Jacques Audiard and André Téchiné.

Girlhood/ Bande de filles France, 2014, 113'

Director and Scriptwriter: Céline Sciamma
Cast: Karidja Touré, Assa Sylla, Lindsay Karamoh, Marietou Toure
Producer: Bénédicte Couvreur
Cinematographer: Crystel Fournier
Production Companies: Hold Up Films, Lilies Films, Arte France Cinéma

A girl with few real prospects joins a gang, reinventing herself and gaining a sense of self-confidence in the process.



Բերտրան Մանդիկո

1971 թվականին Թուլուզում ծնված Բերտրան Մանդիկոն բազմաթիվ կարճամետրաժ ու միջին մետրաժի փորձարարական ֆիլմերի ու էսսեների, ինչպես նաև մեկ լիամետրաժ՝ «Վայրի տղաները» կինոնկարի ռեժիսորն է։ Նրա ֆիլմերը հաճախ ուսումնասիրում են մարմինն ու ինքնությունը՝ ներառելով լուսանկարներ ու տեքստային տարրեր։ 2012 թվականին նա իսլանդացի կինոգործիչ Կատրին Օլաֆսդոտիրի հետ հեղինակել է «Անկապության մանիֆեստը»։



Bertrand Mandico

Born in 1971 in Toulouse, Bertrand Mandico is an experimental filmmaker, who has authored many short and medium-length films and essays and one feature-length film, *The Wild Boys*. His films are often interested in the body and identity and incorporate photos and written elements. In 2012, he created the Incoherence Manifesto along with Icelandic filmmaker Katrin Olafsdotir.

The Wild Boys/ Les garçons sauvages France, 2017, 110'

Director and Scriptwriter: Bertrand Mandico
Cast: Vimala Pons, Anaël Snoek, Diane Rouxel, Mathilde Warnier, Pauline Lorillard, Sam Louwyck, Elina Löwensohn
Producers: Emmanuel Chaumet, Mathilde Delaunay
Cinematographer: Pascale Granel
Production Companies: Ecce Films

Named the top film of 2018 by *Cahiers du cinema*, this is the tale of five adolescent boys who after committing a brutal crime aided by Trevor, a deity of chaos, are punished to board a boat with a captain hell-bent on taming them.

Վայրի տղաները/ Les garçons sauvages Ֆրանսիա, 2017, 110'

Ռեժիսոր և սցենարիստ՝ Բերտրան Մանդիկո
Դերերում՝ Վիմալա Պոնս, Անաել Սնոեկ, Դիանա Ռուքսել, Մաթիլդ Վարնյե, Պոլին Լորիյար, Սեմ Լաուվեյք, Էլինա Լյովենսոն
Պրոդյուսերներ՝ Էմանուել Շոմե, Մաթիլդ Դելանայ
Օպերատոր՝ Պասկալ Գրանել
Արտադրող ընկերություն՝ Ecce Films

«Կայե դյու սինեմա» ամսագրի վարկածով 2018 թվականին լավագույն ֆիլմ ճանաչված այս կինոնկարը պատմում է հինգ դեռահաս տղաների մասին, ովքեր քառսի ոգի Տրեվորի օժանդակությամբ դաժան հանցանք գործելուց հետո աքսորվում են մի նավ, որի նավապետը մտադիր է նրանց սանձել։





Ֆիլիպ Գառել

1948 թվականին ծնված Ֆիլիպ Գառելը կինոռեժիսոր, օպերատոր, սցենարիստ, մոնտաժող և պրոդյուսեր է, ով ասոցացվում է ֆրանսիական «նոր ալիքի» հետ: Ոգեշնչվելով ժան Լյուկ Գոդարից ու Ֆրանսուա Տրյուֆոյից՝ Գառելը 16 տարեկանում նկարահանել է իր առաջին կարճամետրաժը, և դրանից ի վեր նրա ֆիլմերը բազմիցս պարզևատրվել են Կաննի և Վենետիկի կինոփառատոներում: Նա դերասաններ Լուի և Էսթեր Գառելների հայրն է:

Արտասուքի աղը/ Le sel des larmes Ֆրանսիա/ Շվեյցարիա, 2020, 100’

Ռեժիսոր՝ Ֆիլիպ Գառել
Դերերում՝ Լոգան Անտուոֆերմո,
Ուլայա Ամամրա
Սցենարիստներ՝ Ֆիլիպ Գառել,
Ժան-Կլոդ Կարյեր, Առլետ Լանգման
Պրոդյուսեր՝ Էդուարդ Վեյլ
Օպերատոր՝ Ռենատո Բերտա
Արտադրող ընկերություն՝
Rectangle Productions

Երիտասարդ տղան Ֆրանսիայի ծայրամասերից ճամփորդում է Փարիզ, որ բուհական ընդունելության քննություն հանձնի: Ճանապարհին նա հանդիպում է երիտասարդ մի աղջկա, և նրանց միջև կարճատև սիրավեպ է բռնկվում:



Philippe Garrel

Born in 1948, Philippe Garrel is a director, cinematographer, screenwriter, film editor and producer, associated with the French New Wave. Influenced by Jean-Luc Godard and François Truffaut, he wrote and directed his first short film at the age of 16, and since then his films have won him awards at the Cannes and Venice film festivals. He is the father of actors Louis Garrel and Esther Garrel.

The Salt of Tears/ Le sel des larmes France/ Switzerland, 2020, 100’

Director: Philippe Garrel
Cast: Logann Antuofermo, Oulaya Amamra
Scriptwriters: Philippe Garrel, Jean-Claude Carrière, Arlette Langmann
Producer: Edouard Weil
Cinematographer: Renato Berta
Production Companies: Rectangle Productions

A provincial youngster who travels to Paris to sit an entrance exam for a “grande école”. His path crosses that of a young woman and they strike up a short-lived relationship.



Միքայել Էրս

1975 թվականին ծնված Միքայել Էրսը ֆրանսիացի կինոռեժիսոր է, որի կարճամետրաժ ու լիամետրաժ ֆիլմերը մշտապես ցուցադրվում են աշխարհի տարբեր կինոփառատոներում: Ռեժիսոր Լյուկ Մուլեի գնահատմամբ՝ նա «ապագայի մեծագույն ֆրանսիացի կինոգործիչն է»:



Ամանդա/ Amanda Ֆրանսիա, 2018, 107'

Ռեժիսոր՝ Միքայել Էրս
Դերերում՝ Վենսան Լաքոսթ, Սթեյսի Մարտին, Իզաուր Մյուլտրիեր
Սցենարիստներ՝ Միքայել Էրս, Մոդ Ամլին
Պրոդյուսեր՝ Պիեռ Գիառ
Օպերատոր՝ Սեբաստիան Բուխման
Արտադրող ընկերություններ՝ Nord-Ouest Films, Arte France Cinéma

Քրոջ դաժան մահից հետո Դավիթը ստիպված է կտրվել սովորական կյանքից և հոգ տանել իր 7-ամյա զարմուռի Ամանդայի մասին:



Mikhaël Hers

Born in 1975, Mikhaël Hers is a French film director, whose short and feature-length films are regularly screened at festivals around the world. Filmmaker Luc Moullet called Hers “the greatest French filmmaker of tomorrow”.

Amanda France, 2018, 107'

Director: Mikhaël Hers
Cast: Vincent Lacoste, Stacy Martin, Isaure Multrier
Scriptwriters: Mikhaël Hers, Maud Ameline
Producer: Pierre Guyard
Cinematographer: Sébastien Buchmann
Production Companies: Nord-Ouest Films, Arte France Cinéma

After his sister is brutally killed, David finds himself in charge of his 7-year-old niece, Amanda.



Ստեֆան Բատյու

1968 թվականին ծնված Ստեֆան Բատյուն լուսանկարիչ էր նախքան 1990-ականներին կինոարտադրության մեջ ներգրավվելը: Մի քանի կարճամետրաժից հետո նա նկարահանեց իր առաջին՝ «Սնդիկ» լիամետրաժը, որը ներկայացվել է 2019-ին Կաննում և արժանացել ժան Վիգոյի մրցանակին:

Սնդիկ/ Vif-Argent Ֆրանսիա, 2019, 104'

Ռեժիսոր՝ Ստեֆան Բատյու
Դերերում՝ Թիմոթե Ռոբար, Ժյուդիտ Շեմլա
Սցենարիստներ՝ Ստեֆան Բատյու,
Քրիստին Դորի, Ֆրեդերիկ Վիդո
Պրոդյուսերներ՝ Մելանի Գերին,
Պաուլ Ռոզենբերգ, Սերժ Հայաթ
Օպերատոր՝ Սելին Բոզոն
Արտադրող ընկերություն՝
Zadig Films

Փարիզի փողոցներում ժյուսթ անունով մի ուրվական հավաքում է հուշերն այն մարդկանց, որոնց միայն ինքն է տեսնում, նախքան նրանց մյուս աշխարհ ճանապարհելը: Սակայն մի օր Ագաթան ճանաչում է ժյուսթին. իրենք ծանոթ էին, երբ նա դեռ ողջ էր:



Stéphane Batut

Born in 1968, Stéphane Batut worked as a photographer before becoming heavily involved in film in the 1990's as a casting director. After a few shorts, he directed his debut feature *Burning Ghost*, which was presented at the 2019 Cannes Film Festival and awarded the Jean Vigo prize.

Burning Ghost/ Vif-Argent France, 2019, 104'

Director: Stéphane Batut
Cast: Thimotée Robart, Judith Chemla
Scriptwriters: Stéphane Batut, Christine Dory, Frédéric Videau
Producers: Mélanie Gerin, Paul Rozenberg, Serge Hayat
Cinematographer: Céline Bozon
Production Company: Zadig Films

In the streets of Paris a ghost named Juste collects the last memory of people only he can see, before helping them into the afterlife. But one day Agathe recognizes him. She knew him, when he was alive.



Ֆրեդերիկ Ֆարուչի

Կորսիկայի Այաչչո քաղաքում
ծնված Ֆրեդերիկ Ֆարուչին
2019 թվականին ներկայացրել
է իր դեբյուտային «Գիշերով»
լիամետրաժ ֆիլմը, որը,
«Սինեվրոպա» հարթակի
որակմամբ, «շատ
խոստումնալից մի ռեժիսորի
ծնունդն է ազդարարում»:



Frédéric Farrucci

Born in Ajaccio, Corsica, Frédéric Farrucci made his feature film debut in 2019 with *Night Ride*, which as Cineuropa puts it, “reveals a very promising director”.

Night Ride/ La nuit venue France, 2019, 96’

Director: Frédéric Farrucci
Cast: Guang Huo, Camélia Jordana
Scriptwriters: Frédéric Farrucci, Nicolas Journet, Benjamin Charbit
Producers: Céline Chapdaniel, Mat Troi Day, Diane Jassem
Cinematographer: Antoine Parouty
Production Company: Koro Films, Canal+

One night, Noémie, a stripper and bewitching call girl, gets into Jin’s cab. Intrigued by Jin’s silence, she asks him to become her official driver. As the nights go by, a beautiful, yet dangerous love story develops between them.

Գիշերով/ La nuit venue Ֆրանսիա, 2019, 96’

Ռեժիսոր՝ Ֆրեդերիկ Ֆարուչի
Դերերում՝ Հո Գուան, Կամելիա ժորդանա
Սցենարիստներ՝ Ֆրեդերիկ Ֆարուչի,
Նիկոլաս ժյուրնե, Բենժամին Շարբի
Պրոդյուսերներ՝ Սելին Շադանիել,
Մատ Թրոյ Դեյ, Դայան Զասեն
Օպերատոր՝ Անտուան Պարուտի
Արտադրող ընկերություն՝ Koro
Films, Canal+

Մի գիշեր գայթակղիչ
մերկապարուհի ու մարմնավաճառ
Նոեմին նստում է Յզինի
տաքսին: Հրապուրվելով Յզինի
լուսկյացությամբ՝ Նոեմին խնդրում
է նրան իր մշտական վարորդը
լինել: Գիշերներն անցնում են,
և երկուսի միջև գեղեցիկ, բայց
վտանգավոր սիրավեպ է ծնվում:

